

## **Տեղեկանք**

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-L որոշմամբ հաստատված՝ 2019 թվականին իրականացված միջոցառումների արդյունքների մասին.**

**21.1 Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման եւ ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիոհաղորդաշարերի, տպագիր մամուլի եւ ցուցադրատառների միջոցով)**

ՀՀ Լոռու մարզի առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններին տրամադրվել է ՀՀ Առողջապահության նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 3286-Ա հրամանով հաստատված «Ծխախոտային կախվածությունից բուժման և խորհրդատվության ուղեցույց»-ը՝ ազգաբնակչության շրջանում քարոզչական աշխատանքներ իրականացնելու նպատակով: «Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում» ՀՀ Առողջապահության նախարարի 2019թ. նոյեմբերի 7-ի «Մարզերի և Երևան քաղաքի բժշկական հաստատություններին հատկացվող պաստառների բաշխացուցակը հաստատելու մասին» թիվ 3260-Լ հրամանով ՀՀ Լոռու մարզի բժշկական կազմակերպություններին են տրամադրվել հակածխախոտային պաստառներ և փակցվել են տեսանելի վայրում:

**21.2. Առողջության առաջնային պահպանման օղակի թերապեւտների /ընտանեկան բժիշկների վերապատրաստման դասընթացների իրականացում՝ ծխելու դադարեցմանն ուղղված բուժման եւ խորհրդատվության վերաբերյալ 2019թ. դասընթացներ չեն իրականացվել:**

**23.1. «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

«Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ տրամադրվել է կարծիք

**23.2. «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

«Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծը ուսումնասիրվել է և առաջարկություններ չեն ներկայացվել:

**23.3 Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում**

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2019թ. հուլիսի 22-ից բացվել է նոր, ժամանակակից սարքավորումներով հագեցած «Ինվազիվ կարդիոլոգիայի՝ միջամտային սրտաբանության և ինտերվենցիոնալ ռադիոլոգիայի՝ միջամտային ճառագայթաբանության» բաժանմունք, որտեղ իրականացվում են և վճարովի, և անվճար ծառայություններ՝ պետական պատվերի շրջանակներում:

**24.1. «Բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման տեսլականը հաստատելու մասին»**

ՀՀ կառավարության որոշման նախագծը ուսումնասիրվել է և առաջարկություններ չեն ներկայացվել:

**24.2. «ՀՀ առողջապահական համակարգի հնգամյա զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը**

«Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծը ուսումնասիրվել է և առաջարկություններ չեն ներկայացվել:

**25.1. «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման եւ վերահսկման**

2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի հաստատում «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության

նախարարի հրամանի նախագծը ուսումնասիրվել է և առաջարկություններ չեն ներկայացվել:

**34.1. ՀՀ բնակչության ռիսկային խմբերի շրջանում սրբինինգային հետազոտությունների իրականացում՝ ըստ հետեւյալ հիվանդությունների՝ •հիպերտոնիա, •շաքարային դիաբետ, •արգանդի պարանոցի քաղցկեղ**

Մարզի առողջապահական կազմակերպություններում իրականացվում են արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման սկրինինգ /Պապ քսուք/, հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սկրինինգ:

**34.2. Շարժական մամոգրաֆ սարքի ձեռքբերում եւ կրծքագեղձի սրբինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի եւ Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում**

Կրծքագեղձի սկրինինգային հետազոտությունների իրականացման նպատակով ՀՀ Լոռու մարզում դեռևս շարժական մամոգրաֆ չի տրամադրվել:

**219.3 և 219.5 կետերով** առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառներում աշխատանքներ չեն իրականացվել:

**80. «Համայնքների աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացում», որի 1-ին ենթակետով սահմանված է «Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա»:**

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանսֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամի կողմից 2019 թվականի օգոստոս ամսից սկսվել է Ալավերդի և Թումանյան համայնքների աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) պլանների մշակման աշխատանքները: 2019թ. նոյեմբերի 18-29-ը ևս մեկ այց է կազմակերպվել թիրախ համայնքներ՝ նպատակ ունենալով շարունակել մշակման գործընթացը, ճշգրտել թերի տեղեկատվությունը և իր տրամաբանական ավարտին հասցնել ԱՌԿ պլանների մշակման աշխատանքները: Ներկայումս իրականացվում են որոշ խմբագրման աշխատանքներ, որոնք ավարտելուց հետո պլանների ամբողջական փաթեթները կուղարկվեն վերոնշյալ համայնքներին: Համայնքապետարաններն էլ իրենց հերթին դրանք համաձայնեցման կուղարկեն Լոռու մարզպետարան և Լոռու մարզային փրկարարական վարչություն: Նշված կառույցների համաձայնությունը ստանալուց հետո ԱՌԿ պլանները կհաստատվեն Ալավերդի և Թումանյան խոշորացված համայնքների ղեկավարների կողմից՝ 2020 թվականին:

**91.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում**

Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքներում ընթացքի մեջ է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Հարմարվողականության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագիրը:

**105.1 Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրի իրականացում**

«Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 1 մարդ, տրամադրված փոխհատուցման գումարը՝ 252 հազար դրամ:

**105.2 Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի իրականացում**

Նշված ծրագրից մարզում դեռևս օգտվող չի եղել:

**105.3 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրի իրականացում**

Նշված ծրագրից մարզում դեռևս օգտվող չի եղել:

**105.4 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում**

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառման շրջանակում նախատեսված էր հետազոտել մարզի 8 համայնք, սակայն 2019 թվականի հետազոտվել է 11 համայնքի գյուղատնտեսական նշանակության 5573 հա հող: Հետազոտվող տարածքից վերցված 1955 հողանմուշում կատարվել է 4708 փորձաքննություն, կազմվել են ագրոքիմիական քարտեզներ:

**105.5 Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացում**

ՀՀ պետական աջակցության ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Ռեզնանսավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Հայաստանում հարավ-հյուսիս» ծրագրերի

շրջանակներում և թվով 4 ֆերմերների համաֆինանսավորմամբ մարզի Մարգահովիտ, Տաշիր համայնքներում և Բովաձոր բնակավայրում կառուցվել է թվով 4 առաջատար, <<խելացի>> անասնաշենքեր: Ներդրման գումարը կազմել է ընդամենը 226.5 մլն. դրամ, որից <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի կողմից՝ 43.5 մլն դրամ, պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ 40.5 մլն դրամ, մասնավոր ներդրումներ՝ 142.5 մլն դրամ, որտեղ կբուծվի շուրջ 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ:

### **106.1 Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում**

«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 28 մարդ, տրամադրված 24 գյուղտեխնիկա, 21 գյուղգործիք վարկերի գումարը՝ 171 մլն.369 հազար դրամ

### **107.1 Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացմանը**

Նշված ծրագրից մարզում դեռևս օգտվող չի եղել:

### **107.2 Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման նպատակով հանրապետության մարզերի տարածաշրջաններում հետբերքահավաքային կարիքների (իրացման և մթերման կետեր, պահեստարաններ, սառնարանային տնտեսություն և այլն) և մթերման կետերի ստեղծման համար անհրաժեշտ հողատարածքների և շինությունների գնահատում**

Գուգարք համայնքում հիմնվել է 40 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն: Ներդրման գումարը կազմել է 35 մլն. դրամ, որից 13 մլն դրամը ներ է դրվել 2019թ-ն: Մարզում սառնարանային տնտեսությունների հզորությունը կազմում է 415 տոննա:

### **110.1 Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում**

«Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 3 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 21մլն.834 հազար դրամ

### **113.1 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում**

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2019 թվականի աշնանը մարզին անհատույց հատկացվել է 498 լիտր «Բրոմադիալոն»

տեսակի մկնասպան միջոց, որով հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել 6225 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում: Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում

### **113.2 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում**

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ իրականացվել է 35339 հատ ախտորոշիչ, իսկ տուբերկուլյոզի նկատմամբ 1553, սիբիրախտի՝ 70643, խշխշան պալար՝ 5646, դաբաղի՝ 69118, պաստերելյոզի՝ 45789, վարակիչ մաշկաբորբի՝ 23322 հատ կանխարգելիչ միջոցառում: Մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ կատարվել է 1269 հատ ախտորոշիչ միջոցառում: Խոզերի ժանտախտ հիվանդության նկատմամբ կատարվել է 27032, ձիերի սիբիրախտի՝ 362, թռչունների ժանտախտի՝ 78725 հատ կանխարգելիչ միջոցառում, ընդհանուր թվով << Լոռու մարզում իրականացվել է 358798 հատ միջոցառում:

### **113.3 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում**

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ դաբաղ հիվանդության դեմ իրականացվել է 69118 հատ կանխարգելիչ միջոցառում:

### **117.1 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում**

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 792, տրամադրված վարկերի գումարը՝ 3 միլիարդ 40 մլն. 350 հազար դրամ

### **117.2 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում**

Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 6 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 129 մլն 949 հազար դրամ

### **117.3 Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակում**

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության մշակումը ընթացքի մեջ է:

**228. Ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված առևտրի կետերում, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում առկա**

## **սանիտարական հանգույցների վիճակի բարելավման ուղղությամբ շարունակականության գործընթացների ապահովում**

Մարզի տարածքում առկա թվով 38, որից գործող 37 գազալցակայաններից 15-ում սանհանգույցները գտնվել են ոչ բարվոք վիճակում: Կազմակերպվել են բազմաթիվ այցեր, կատարվել են բացատրական և խորհրդատվական աշխատանքներ, որոնց արդյունքում 3 գազալցակայանում կառուցվել է նոր սանհանգույց, 8-ում սանհանգույցները բերվել են բարվոք վիճակի իսկ թվով 4 գազալցակայանների սանհանգույցներ այժմ գտնվում են ոչ բարվոք վիճակում: Դրանց վերաբերյալ գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին և առաջարկվել է 4 ընկերություններում իրականացնել տեսչական ստուգումներ, որի արդյունքում նրանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ և ենթարկվել են վարչական պատասխանատվության:

### **267.1 Միասնական երթուղային ցանցի օպտիմալ տարբերակի մշակում**

Միասնական երթուղային ցանցի ձևավորման աշխատանքներն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից: Համապատասխան պահանջի դեպքում Լոռու մարզպետարանը տրամադրում է տվյալներ:

### **360.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում**

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմանն ուղղված որևէ միջոցառում չի իրականացվել: Լոռու մարզի բոլոր համայնքների խոշորացումից հետո կանդիդատներն այդ խնդրին:

### **367.1 «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը տրամադրվել է համայնքների ղեկավարներին:**

Տարբեր նշանակության շենքերի և շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման շրջանակներում Լոռու մարզի քաղաքային համայնքներում պարբերաբար թարմացվում է համայնքների վարչական սահմաններում գտնվող շենքերի և շինությունների վթարայնության աստճանների վերաբերյալ տեղեկատվությունները և ներկայացվում է Լոռու մարզպետարան: Առաջարկվել է նաև շենք շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազոտությունը և անձնագրավորումը իրականացնել նոր

նորմատիվատեխնիկական, մեթոդաբանական, միջազգային նորմերին համապատասխանող փաստաթղթերի և կարգերի առկայության պայմաններում, արտակարգ իրավիճակների նախարարության հետ ստեղծել մասնագիտացված աշխատանքային խմբեր, որոնք կիրականացնեն փաստագրումներ:

**369.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ:**

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում ծրագրով ավարտական տեսքի է բերվել նախկինում կիսակառույց մնացած 44 առանձնատներ: Ֆինանսական միջոցների տնտեսումը նշված ծրագրով կազմում է մոտ 110.8 մլն. դրամ, որով նախատեսվում է ավարտական տեսքի բերել լրացուցիչ ևս 7 անավարտության տարբեր աստիճան ունեցող կիսակառույց առանձնատներ: 2019թ.-ին նշված ծրագրով հատկացվել է ևս 452.3 մլն. դրամ և 677.9 մլն. դրամ, աշխատանքները ընթացքի մեջ են կավարտվեն 2020թ.-ին: